ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ ----------Գ. Աբրահամյան

15 09 2022 թ

ՍՏՈՒԳՎԱԾ Է

Փոխտնօրեն՝ ----------Հ. Գասպարյան----------

«12» սեպտեմբերի 2022 թ.

ԴԱՍՂԵԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆ

2022- 2023 ՈՒՍՏԱՐԻ

ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ

7-ՐԴ Ա ԴԱՍԱՐԱՆԻ ԴԱՍՂԵԿ՝ ԿԱՐԻՆԵ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում *Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին, որպեսզի շտկվեն այդ թերությունները: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :*

2. Գեղագիտական դաստիարակություն *Շարունակել գրական –երաժշտական միջոցառումները մարզային գրադարանի հետ: Կոմիտասին նվիրված միջոցառում կազմակերպել նաև դպրոցի համար: Համապատասխան հանձնախմբի միջոցով անցկացրած տարբեր բնույթի մշակութային միջոցառումների միջոցով ձևավորել նրբաճաշակություն և խոսքի մշակույթ: Հիշարժան տոնել Մայրենիի օրը: Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկա սերնդի կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը տվյալ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3. Հոգևոր դաստիարակություն *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Նույն նպատակով կատարել պատմական ակնարկ, որը կնպաստի հոգևոր դաստիարակության ձևավորմանը:Այցելել պատմամշակութային վայրեր:*

4. Ռազմահայրենասիրական դաստիարակություն *Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ, բանավեճեր: Նշել մի շարք հերոսների անուններ և բնութագրել նրանց բնավորության հզոր գծերը, որտեղ ակներև է հայրենասիրությունը և ռազմարվեստ ձևերը: Մշտապես խնամել հերոս Վարդան Վարդանյանի անկյունը՝ մեծարելով Արցախյան պատերազմի հերոս նահատակներին և կենդանի մնացած լեգենդներին: Այդ թեմայով ասմունքի ցերեկույթներ և հիշատակի օրեր կազմակերպել և խնամել հերոսի անվամբ տնկած եղևնին:*

5. Ֆիզիկական դաստիարակություն *Դասապրոցեսին պետք է ցուցաբերել ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կատարել ամենօրյա ֆիզվարժություններ և այլ հնարների միջոցով կոփել մարմինը:*

6. Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Տալ աշակերտներին այն գաղափարը , որ ներկայիս դժվար պայմաններում գոյատևելու ամենակարևոր գործոնը աշխատասիրությունյ է, որի միջոցով կարող են ունենալ շատ ձեռքբերումներ :*

7. Բնապահպանական դաստիարակություն *Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ , որոնք առկա են մեր շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Հաջախակի կազմակերպել սանիտարական օրեր դասարանում և մեր շրջակայքում:*

8. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է սերտ կապի մեջ պահեն դպրոց -ընտանիք կապը, որպեսի աշակերտները ոչ ավելի լավ սովորեն, այլև դառնան հասարակության համար արժանի մարդիկ:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսում-նական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
1	ԴՊՐՈՑԻ ԲԱՑՄԱՆ ՕՐ: ԴԱՍ-ԶՐՈՒՅՑ՝ << Գիտելիքի օր >>	սեպտեմբեր 1	դասղեկ
2	<<Իմ նախասիրությունները, մասնագիտական կողմնորոշումը և երազանքները>> Նպատակը՝ ձևավորել ինքնուրույն մտածողություն և աշխարհահայացք, ապագա մասնագիտության մասին պատկերացում:	սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
3	<< ԿԱՐԵԿՑԱՆՔ>> թեմայով քննարկում: Նպատակը՝ մոմավառություն եկեղեցում հայ զինվորների անվտանգության համար:	սեպտեմբեր	դասղեկ աշակերտներ
4	<<Անկախության տոն >> թեմայով զրույցը հնարավորություն կտա	սեպտեմբեր 21	դասղեկ աշակերտներ

	ձևավորել հարգանք պետականության նկատմամբ:		
5	<< Ուսուցչի օր>> զրույց՝ նվիրված ուսուցիչների տոնին:	հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
6	<< Մարդկային բարիդրացիական հարաբերությունները կդարձնեն աշխարհն ավելի լավը >> թեմայով քննարկում:	հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
7	<< Կարգապահական կանոններ>> Նպատակն է հստակեցնել աշակերտների մոտ իրենց իրավունքները և պարտականությունները:	հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
8	<< Հայաստանս.... >> թեմայով տեսադաս և զրույց: Նպատակն է աշակերտներին ներկայացնել հայրենիքը պահպանելու կարևորությունը:	հոկտեմբեր	դասղեկ աշակերտներ
9	<< Մենք և բնությունը >> Աշակերտներին հանձնարարել հավաքել տեղեկություններ Հայաստանի Հանրապետության ավելի ուշագրավ էկոլոգիական խնդիրների մասին:	նոյեմբեր նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
10	<<Այցելություն պատկերասրահ>> քննարկում: Նպատակը կնպաստի աշակերտների գեղագիտական ճաշակի ձևավորմանը:	նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
11	<< Ճանաչի՛ր ինքդ քեզ >> նպատակն է արժևորել արժեհամակարգ, ինչպես նաև կարողանալ կատարել ինքնավերլուծություն:	նոյեմբեր	դասղեկ աշակերտներ
12	<< Գթասրտությունը սահմաններ չունի >> թեմայով զրույց, որի նպատակն է սովորեցնել հանդուրժել մարդկանց առանց խտրականության:	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
13	<< Բնական աղետներից		դասղեկ

	պաշտպանվելու կանոններ>>: Նպատակն է՝ ներկայացնել բնական աղետների առաջացման պատճառները և դրանց հետևանքները:	դեկտեմբեր	աշակերտներ
14	<< Մենք միասին կարող ենք... >> թեման հնարավորություն կտա աշակերտների մոտ ձևավորել բարին և միասնականությունը:	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
15	Ամանորյա տոնական միջոցառում. մասնակցություն համադպրոցական դիմակահանդեսին:	դեկտեմբեր	դասղեկ աշակերտներ
16	Փոքրիկ պատմվածքի քննարկում Նպատակն է աշակերտներին տեղեկացնել թե մարդկությունը ինչ ժամանակաշրջան է անցել:	հունվար	դասղեկ աշակերտներ
17	<< Ազգային բանակի օր>> նպատակն է հստակեցնել մեր բանակի տոնի առանձնահատկությունները և ազդեցությունները:	հունվար	դասղեկ աշակերտներ
18	<< Եկեղեցին և ազգային արժեքները >> քննարկման միջոցով աշակերտների մոտ կհիմնավորեք եկեղեցու դերը հայ իրականության և հայ ժողովրդի կյանքում:	հունվար	դասղեկ ՀԵՊ ուսուցչուհի
19	<< Իմ հետաքրքրությունները՝ սպորտ, երաժշտություն, համակարգչային տեխնիկա, ձեռնարվեստ, արվեստ, արհեստներ>> թեմայով քննարկում	փետրվար	դասղեկ աշակերտներ
20	<< Վատ սովորություններ>> քննարկման միջոցով կներկայացվի այս խնդրի ծագման պատճառները:	փետրվար	դասղեկ անչափահասների տեսուչ
21	<<Մայրենիի օր >> օգնել սովորողներին գիտակցելու մայրենի լեզվի կարևոր դերը ազգի պահպանության գործում:	փետրվար	դասղեկ աշակերտներ
22	<< Առաջին բժշկական օգնություն >> ներկայացնել և ձևավորել իրենց առողջության	փետրվար	դասղեկ մանկաբույժ

	պահպանման մասին:		
23	<< Քաղաքացիական ինքնություն >> կիմանան ինչ է քաղաքացիական ինքնությունը կհասկանան թե քաղաքացի լինելն ինչքանով է առնչվում իրենց հետ:	մարտ	դասղեկ աշակերտներ
24	<< Իմ բարի՛ և քնքո՛ւշ մայրիկ >> ՝ նվիրված մայրության և գեղեցկության տոնին	մարտ մարտ	դասղեկ աշակերտներ
25	<< Աշխատանքն ազնվացնում է մարդուն>> թեմայով քննարկում, կօգնի դասակարգելու մարդու կարողություններն ու հմտությունները	մարտ	դասղեկ աշակերտներ
26	<< Գեղեցկության և մայրության տոնին նվիրված միջոցառում >>	ապրիլ	դասղեկ աշակերտներ
27	<< Գարնան զարթոնք >> զբոսանք մոտակա զբոսայգում: Նպատակն է՝ ներկայացնել, թե ինչպես է յուրաքանչյուրն զգում գարնան բույրը:	ապրիլ	դասղեկ աշակերտներ
28	<Հայոց Մեծ եղեռն>>. աշակերտներին ներկայացնել ահազարհուր ոճրագործությունը՝ նրանց մոտ սերմանելով հայրենատիրության գաղափարը:	ապրիլ	դասղեկ պատմ. ուսուցիչ
29	<<Ազգային ծիսական տոներ. Զատիկ>: Նպատակն է աշակերտների մոտ ձևավորել ազգային գիտակցության արժեհամակարգ:	ապրիլ	դասղեկ եկ. պատմ. ուսուցիչ
30	<< Ինչպե՞ս լինել պատասխանատու >> աշակերտները այս թեմայի ուսումնասիրելուց հետո կիմանան, թե ինչպես պետք է լինի ցանկացած քաղաքացի:	մայիս	դասղեկ աշակերտներ
31	<<Մայիսյան տոներ>> թեմայով անհատական խմբային ներկայացումներ: Նպատակը՝ ձևավորել հպարտության զգացում հայրենիքի և ազգային շարժումների նկատմամբ:	մայիս	դասղեկ